ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 96-րդ հոդվածը, կից ներկայացնում եմ «Հայաստան» խմբակցության որոշումը «Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը (Կոդ՝ Պ-156-04.02.2022-ՊԻ-011/0) արտահերթ հարց համարելու մասին՝ այն սահմանված կարգով Ազգային ժողովի 2022թ. մարտի 22-ին գումարվող հերթական նիստերի երեքշաբթի օրվա երկրորդ հիմնական նիստում քննարկում կազմակերպելու նպատակով:

Առդիր 2 էջ:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՕՀԱՆՅԱՆ

17.03.2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԸ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՐՑ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետը, 40-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, 96-րդ հոդվածը, Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության կանոնադրությունը,

Կարևորելով «Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը (Կոդ՝ Պ-156-04.02.2022-ՊԻ-011/0) (հեղինակ՝ «Հայաստան» խմբակցության պատգամավորներ Իշխան Սաղաթելյան, Աղվան Վարդանյան, Արամ Վարդևանյան) առաջարկվող կարգավորումը,

Նկատի առնելով այն, որ նշված՝ «Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը՝ Ազգային ժողովի Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը 15.03.2022թ. նիստում տվել է բացասական եզրակացություն,

Հաշվի առնելով «Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի հեղինակների համաձայնությունը.

Ազգային ժողովի «ՀԱՅԱՍՏԱՆ» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Անհրաժեշտ համարել «Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի քննարկումը Ազգային ժողովի նիստում:

2. «Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը համարել արտահերթ հարց, որը քննարկման է ենթակա Ազգային ժողովի 2022թ. մարտի 22-ին գումարվող հերթական նիստերի երեքշաբթի օրվա երկրորդ հիմնական նիստում:

3. Առաջարկել Ազգային ժողովի նախագահին՝ սույն որոշմամբ նախատեսված հարցն ընդգրկել Ազգային ժողովի հերթական նստաշրջանի օրակարգ և կազմակերպել դրա քննարկումը սույն որոշման 2-րդ կետում նշված նիստում, որպես ընդդիմադիր խմբակցության կողմից արտահերթ համարված հարց:

4. «Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի հիմնական զեկուցողն է «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արամ Վարդևանյանը:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

17.03.2022թ.